Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
օգոստոսի 26-ի N 1072 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Վ Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության դրոշը պատվի և արժանապատվության, արիության ու նվիրումի խորհրդանիշ է: Դրոշը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության յուրաքանչյուր աշխատողի սրբազան պարտքի հիշեցումն է հայրենիքին անձնուրաց ծառայելու, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներն անվերապահորեն կատարելու, յուրաքանչյուր մարդու կյանքը, առողջությունն ու գույքը փրկելու, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքն իրականացնելու մասին:

2. Դրոշը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը հանձնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ նրա կողմից լիազորված անձը:

3. Դրոշի հետ հանձնվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի ստորագրությամբ վկայագիր:

4. Դրոշը մշտապես պահվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունում:

5. Դրոշի պահման, պահպանման և օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարը:

6. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության յուրաքանչյուր ծառայող պարտավոր է պահպանել և պաշտպանել դրոշը:

7. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության դրոշը բաղկացած է երկդեմ պաստառից և ծոպափնջերով քուղերից, կտորի գույնի համակարգչային հարաբերակցությունն է՝ C = 98 տոկոս, M = 96 տոկոս, Y = 45 տոկոս, K = 18 տոկոս: Դրոշի պաստառն ուղղանկյունաձև է, երկարությունը 1450 մմ է, լայնությունը՝ 1150 մմ՝ համաձայն ձևի:

8. Դրոշը կարված է երկտակ մետաքսե մուգ կապույտ կտորից՝ երեք կողմից երիզված ոսկեգույն ծոպերով: Պաստառի երեսի կողմի կենտրոնական մասում ոսկեգույն մետաքսաթելով ասեղնագործված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը. տառերի բարձրությունը 70 մմ է, լայնությունը՝ 50 մմ: Դրոշի ձախ անկյունում պատկերված է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության խորհրդանիշը՝ 240 x 160 մմ չափերով:

9. Դրոշի պաստառի հակառակ կողմի կենտրոնական մասում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ 300 x 300 մմ չափերով: Հայաստանի Հանրապետության զինանշանի վերին մասում ոսկեգույն մետաքսաթելով կամարաձև ասեղնագործված են «ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ» բառերը. տառերի բարձրությունը 60 մմ է, լայնությունը՝ 40 մմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
օգոստոսի 26-ի N 1072 - Ն որոշման

Ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՇ

Նկ.1. Դրոշի երեսի կողմ

Նկ.2. Դրոշի հակառակ կողմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_1072

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թվականի
օգոստոսի 26-ի N 1072 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԵՎ Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության խորհրդանիշը (այսուհետ՝ խորհրդանիշ) այն նշանն է, որը ցույց է տալիս ծառայողների, ինչպես նաև նյութատեխնիկական և այլ գույքի պատկանելությունը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը:

2. Խորհրդանիշը դրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի աշխատասենյակում, ինչպես նաև պատկերվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության դրոշի (դրոշակի) վրա:

3. Խորհրդանիշի պատկերը զետեղվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կենտրոնական ապարատի անմիջական ենթակայության ստորաբաժանումների, նախարարության կառուցվածքային և այլ ստորաբաժանումների անկյունադրոշմակների կամ անկյունադրոշմակով դրոշմաթղթերի վրա:

4. Խորհրդանիշը դրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ծառայողների համազգեստի, ավտոմեքենաների և այլ հատուկ տեխնիկայի վրա:

5. Թույլատրվում է խորհրդանիշի պատկերի կիրառումը տպագրական, գովազդային-տեղեկատվական և հուշանվերային արտադրանքի (ծրագրեր, օրացույցներ, կրծքանշաններ, ժամացույցներ, թղթապանակներ և այլն), տեսաժապավենների վրա՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ:

6. Խորհրդանիշի պատկերի կիրառման այլ դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի կողմից:

7. Խորհրդանիշը պահպանվում է օրենքով սահմանված կարգով:

8. Խորհրդանիշը վահանաձև շերտ է, որի երկարությունը 120 մմ է, միջնամասի լայնությունը՝ 80 մմ: Վահանից դուրս են գալիս կապույտ և նարնջագույն երկու ուղղանկյուն երիզներ՝ 20 մմ լայնությամբ և 105 մմ երկարությամբ՝ համաձայն ձևի:

9. Վահանի միջնամասում պատկերված է նարնջագույն շրջան, որի կենտրոնում քաղաքացիական պաշտպանությունը և փրկարարությունը խորհրդանշող հավասարակողմ եռանկյունաձև կապույտ տարբերանշանն է՝ կողմի 20 մմ երկարությամբ: Շրջանը երիզում է 15 մմ լայնությամբ արծաթագույն փրկարար օղակը՝ բաժանված 12 թերթիկների, որոնք իրարից բաժանված են ճառագայթաձև, 2 մմ լայնությամբ, բաց նարնջագույն գծերով, որոնց լծորդումը կատարված է շրջանի կենտրոնից և խորհրդանշում է արև ու հավերժություն: Հաջորդ շերտը Հայաստանի Հանրապետության դրոշի եռագույն օղակն է՝ 5 մմ լայնությամբ իրարից բաժանված գծերով: Խորհրդանիշը երիզված է 2 մմ լայնությամբ սպիտակ փրկարար պարանով և 10 մմ լայնությամբ, կապույտ երկինքը խորհրդանշող, շրջանաձև երիզով, որի վրա N 7 տառատեսակով, հայերենով գրված է «ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱ-ՐԱՐՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևի մասում անգլերենով գրված է “MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA”:

10. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության անձնակազմը համազգեստի վրա խորհրդանշանը, որպես տարբերանշան, կրում է ուսաեզրից 80 մմ ներքև, ձախ բազկի կենտրոնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2010 թվականի
օգոստոսի 26-ի N 1072 - Ն որոշման

Ձև

Խ Ո Ր Հ Ր Դ Ա Ն Ի Շ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ